ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԼՂՀ ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբեր ամսվա գործունեության վերաբերյալ (հարկային մարմնի մասով)

<u>Ընթացիկ աշխատանքներ</u>

Նախնական տվյալներով 2015 թվականի տասնմեկ ամսվա ընթացքում ԼՂՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 27235.9 մլն դրամ՝ պլանավորված 27100.0 մլն դրամ ցուցանիշը գերակատարելով 0.5 %-ով կամ 135.9 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 7.9 %-ով կամ ավել 1989.1 մլն դրամով:

Նոյեմբեր ամսում ԼՂՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 2762.5 մլն դրամ՝ պլանավորված 2750.0 մլն դրամ ցուցանիշը գերակատարելով 0.5 %-ով կամ ավել 12.5 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 3.7 %-ով կամ ավել 97.6 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) են թվով 70 տնտեսավարող սուբյեկտ և լուծարվել (հաշվառումից հանվել)՝ 4 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել են 50 ստուգում, որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկվել է 62.3 մլն դրամ: Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 87 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 60-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 8-ը՝ ակցիզային դրոշմանիշների շարժի ու դրոշմավորման կանոնների պահպանման, 5-ը՝ գործունեության չծավալման, 3-ական՝ ապրանքանյութական արժեքների մնացորդի ճշտության և ելակետային տվյալների ու ուղղիչ գործակիցների ճշտության և 8 այլ ուսումնասիրություններ:

Հաշվետու ամսում ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան է ներկայացվել 29 վարչական գործ՝ 70.0 մլն դրամ գումարով, ավարտվել՝ 12 վարչական գործ, որով բավարարված գումարը կազմել է 43.9 մլն դրամ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով քննված 113 վարչական գործով սահմանվել է 1.5 մլն դրամ վարչական տուգանք:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել են 4951 հաշվարկ-հաշվետվություն, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով ընդունվել են 611 գրանցման հայտ և 2854 եկամտային հարկի հաշվարկ:

Էլեկտրոնային հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 38 պայմանագրեր:

Ծրագրային նախապատրաստական աշխատանքներ են իրականացվել 2016 թվականի հունվարի 1-ից հարկային հաշվարկների՝ էլեկտրոնային եղանակով ընդունումն ապահովելու նպատակով:

Հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձման գործընթացի շրջանակներում կատարվել է վերադարձ 62 վարձու աշխատողի՝ 8.5 մլն դրամի չափով:

Մշակվել և ԼՂՀ կառավարության ու Ազգային Ժողովի քննարկմանն է ներկայացվել հարկային օրենսդրությունում փոփոխություններ նախատեսող 8 օրենքների նախագծեր, որոնք ուղղված են գործարարության համար առավել նպաստավոր պայմանների ստեղծմանն ու վարչարարության մեղմացմանը:

ՀՀ և ԼՂՀ հարկային մարմինների միջև իրականացվել են անուղղակի հարկերի հաշվանցումների համար հիմք հանդիսացող փաստաթղթերի, տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները:

Նոյեմբերի 3-ին ֆինանսների նախարարի տեղակալի գլխավորությամբ հանդիպում է կազմակերպվել մանրածախ առևտրի ոլորտում գործող հարկ վճարողների հետ, համատեղ քննարկվել ոլորտում առկա խնդիրները: Նմանատիպ հանդիպումներ են կազմակերպվել նաև բոլոր շրջաններում:

Ֆինանսների նախարարի 2015 թվականի նոյեմբերի 13-ի «Ուսուցողական սեմինարներ կազմակերպելու մասին» N 294 հրամանի համաձայն՝ նոյեմբերի 20-ից հարկային մարմնում կազմակերպվել է երկշաբաթյա տևողությամբ ուսուցողական

դասընթացներ, որին մասնակցել են խոշոր հարկ վճարողների վարչության, Ստեփանակերտ քաղաքի և շրջանների հարկային տեսչությունների թվով 67 աշխատակիցներ: Եվս 4 աշխատակիցներ մասնակցել են ՀՀ ֆինանսների նախարարության ուսումնական կենտրոնի կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացներին:

Նոյեմբեր ամսում հարկային մարմնում կայացել է հարկային ծառայության կրտսեր խմբի թափուր պաշտոններ զբաղեցնելու համար բաց մրցույթ, որի արդյունքում 3 հաղթող ճանաչված մասնակիցներ նշանակվել են հարկային ծառայողի պաշտոնների, իսկ 13 դիմորդ՝ հնարավորություն ստացել մասնակցելու կայանալիք կրկնակի բաց մրցույթին:

Հաշվետու ժամանակահատվածում հարկային մարմին է մուտքագրվել 425, ելքագրվել՝ 151 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի: